

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ԻՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Տիգրան Մուկուչյան

*ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ,
ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ*

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»¹, որով դրվեց Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը: Հռչակագիրը, որ կարևոր իրավական փաստաթուղթ էր դեպի անկախություն տանող ճանապարհին և նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները, բաղկացած էր 12 կետից: Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Գ. Հարությունյանը, Հռչակագիրը «հիմնարար, հետևողականորեն համակարգված, պատմատրամաբանական խոր ընդհանրացումներ բովանդակող, ազգային ինքնության առաջնահերթությունները հաշվի առնող, միջազգային սահմանադրավական զարգացումների ընդհանուր տրամաբանությունից ելնող նորմերի ու սկզբունքների ամբողջություն է, որը երբեք չի կորցնի իր թե՛ պատմական և թե՛ գործնական իրավական նշանակությունը»²: Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել Հռչակագրի մի շարք կոնկրետ դրույթների, որոնք հանդիսացան Հայաստանի սահմանադրական ապագա զարգացումների սկզբունքային կողմորոշիչները՝ կանխորոշելով նոր Հայաստանի զարգացման ուղենիշները: Հռչակագրի 9-րդ կետով Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում էր «օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը», որն ըստ էության հռչակում էր նոր, սկզբունքորեն այլ որակական չափանիշների համապատասխանող իրավակարգի հիմքը: Այս կապակցությամբ կարելի է արձանագրել, որ Հայաստանի երրորդ Հանրապետության նոր դատական իշխանության մարմինների համակարգի ձևավորման առաջին փուլը ներառում է 1990 թվականի օգոստոսի 23-ից մինչև 1995 թվականի հուլիսի 5-ը (մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը):

Նոր դատական իշխանության համակարգի արմատական բարեփոխումները պայմանավորված էին ՀՀ Սահմանադրության ընդունումով՝ 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեի միջոցով: Սահմանադրավական նորմերը հիմք դրեցին դատաիրավական բարեփոխումների երկրորդ՝ բեկումնային փուլին, որը ներառում է 1995թ. հուլիսի 5-ից մինչև 2005 թվականի նոյեմբերի 27-ը (մինչև սահմանադրական փոփոխությունների անց-

¹ Հայաստանի Հանրապետության, Գերագույն խորհրդի տեղեկագիր, N16 (972) 31 օգոստոսի 1990 թ., հոդվ. 256:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, «Իրավունք», 2010, էջ 19:

կացումը):

2005 թվականի նոյեմբերի 27-ին համրաքվեի միջոցով էական փոփոխություններ կատարվեցին ՀՀ Սահմանադրության բովանդակության մեջ, որոնք աղերսվեցին նաև դատական իշխանության ներկա համակարգին: Այդ փոփոխություններն էլ հիմք դրեցին դատախարավական բարեփոխումների երրորդ փուլի գործընթացին, որը դեռևս լինելիության և կատարելագործման ընթացքում է:

Եվ այսպես, նոր դատական իշխանության մարմինների ձևավորման հիմքը դրվեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագրով: Համաշխարհային իրավաբանական պատմության մեջ բազում են այն փաստերը, որոնք վկայում են, որ ժողովուրդների պատմական զարգացման շրջադարձային ժամանակահատվածներին բնութագրական է հռչակարգերի ընդունումը՝ որպես ժողովրդի կողմից կատարվող ձևատարական և անհրաժեշտ ընտրության միջոց՝ կանխորոշելով նրա հետագա զարգացման ուղենիշները³: Հենց այդպիսին է «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը: Այս առումով համամիտ ենք իրավագիտության դոկտոր Վ. Ռ. Նազարյանի տեսակետի հետ, համաձայն որի. «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը իրավաբանական առումով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բովանդակության օրգանական մասն է»⁴:

Անկախության մասին հռչակագիրը, որն ամրագրեց պետության և անհատի փոխհարաբերության նոր մոդել, ճանաչեց իրավական, ժողովրդավարական պետության կառուցման անհրաժեշտությունը, պետություն, որի կազմակերպման հիմնական սկզբունքը պիտի լիներ իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը:

Հռչակագրի նորմերը մինչև Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության ընդունումն իրենց որոշակիցումն ստացան «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքում⁵, որն ընդունվեց 1991 թ. սեպտեմբերի 25-ին (հետագայում իր ուժը կորցրեց ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի հիմքով): Հետխորհրդային հայ իրավագետների կողմից շատ են ներկայացվել այս օրենքի կարևորությունն ու նշանակությունը: Սակայն թերևս ամենալիարժեք գնահատական տրված է ի. գ. դ. Գ. Հարությունյանի կողմից. «Այս օրենքը կարևոր հանգրվան էր սահմանադրական բարենորոգման ճանապարհին, որովհետև իր բնույթով նպատակային, ծրագրային, համալիր ակտ էր, որն ամրագրում էր հետագա սահմանադրական զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք դրույթներ»⁶: Վերարտադրելով Հռչակագրի դրույթները՝ օրենքը սահմանադրական մակարդակով ամրագրեց, որ «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը» (հոդվ. 3), «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մարմինների համակարգը, իրավասությունների շրջանակը և փոխհարաբերության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» (հոդվ. 6):

³ Ст'у Конституции и законодательные акты буржуазных государств XVII-XIX вв. М., 1957, с. 167-170, 250-252.

⁴ Ст'у Նազարյան Վլադիմիր, Հայաստանի անկախության հռչակագրի տասնամյակը. «Սահմանադրական դատարան. Տեղեկագիր», 3 (16) 2000, էջ 5:

⁵ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N18 (998) 30 սեպտեմբերի 1991թ., հոդվ. 402:

⁶ Ст'у Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 20:

Սակայն հարկ է նկատել, որ 1991-1995 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետության դատական մարմինների կազմավորման սկզբունքներում արմատական որևէ փոփոխություն տեղի չունեցավ: Համակարգը շարունակում էր գործել հին կանոնակարգումներին համապատասխան: Նույնիսկ առկա են օրենսդրական կանոնակարգումներ, որոնք թույլ են տալիս պնդելու, որ «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի և «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի հռչակած սկզբունքները, ինչպես նաև ընդունված օրենքների նոր կանոնակարգումները չունեն լիարժեք ընկալում, հայեցակարգային և հետևողական աշխատանքի արգասիք չէին: Այսպես, 1991 թ. նոյեմբերի 19-ին ընդունված «Գերագույն խորհրդի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 19-րդ կետը սահմանում էր, որ ՀՀ Գերագույն խորհուրդը ՀՀ Նախագահի ներկայացմամբ ընտրում է ՀՀ սահմանադրական դատարանի անդամներին, գերագույն դատարանի նախագահին, նրա տեղակալներին և գերագույն դատարանի անդամներին, գլխավոր պետական արբիտրին, հաստատում է գերագույն դատարանի նախագահության կազմը, ընտրում է շրջանային և քաղաքային ժողովրդական դատարանների ժողովրդական դատավորներին, օրենքով սահմանված կարգով լուծում է նշված պաշտոնատար անձանց հետկանչի կամ ազատման հարցը: Նույն օրենքի նույն հոդվածի անմիջապես հաջորդ կետը սահմանում էր Գերագույն խորհրդի մեկ այլ լիազորություն՝ «լսել իր կողմից կազմվող կամ ընտրվող մարմինների, իր կողմից նշանակվող կամ ընտրվող պաշտոնատար անձանց հաշվետվությունները կամ հաղորդումները»: Նման կանոնակարգումներից ակնհայտ էր դառնում, որ գերագույն դատարանի նախագահից մինչև շրջանային ժողովրդական դատավարնի դատավոր հաշվետու էին Գերագույն խորհրդին, սա այն դեպքում, երբ ընդամենը երկու ամիս առաջ ընդունված սահմանադրական օրենքը հռչակում էր՝ իշխանությունների տարանջատման սկզբունքի ապահովում: Նույն իրավադրույթն անուղղակի կերպով սահմանում էր սահմանադրական դատարանի անդամներ նշանակելու իրավասություն, այն պայմաններում, երբ երկրում առկա չէր նման դատարան, իսկ, ինչպես պարզվեց հետագայում, սահմանադրական դատարան հիմնադրվեց միայն 1996 թ.-ին՝ ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումն ընկած ժամանակաշրջանի վերլուծությամբ կարել է փաստել, որ դատական համակարգի վերաբերյալ ընդունվում էին այնպիսի ակտեր, որոնք ի զորու կլինեին ինչ-որ կերպ ապահովելու արդարադատության իրականացումն անցման տարիներին: Ժամանակի թելադրանքով, առանց խորը վերլուծությունների ստեղծվում կամ վերացվում էին տարբեր մարմիններ: Մասնավորապես, դրա վկայությունն է «Հայաստանի Հանրապետության դատական համակարգում զինվորական դատարան ստեղծելու մասին» 10.08.1992 թ. ընդամենը երկու հոդվածից բաղկացած և բազմաթիվ անպատասխան հարցեր առաջադրող օրենքը: Ի դեպ նկատենք, որ նշված օրենքի 1-ին հոդվածով նախատեսվում էր՝ «Հայաստանի Հանրապետության դատական համակարգում ստեղծել զինվորական դատարան (տրիբունալ)», իսկ 2-րդ հոդվածը սահմանում էր՝ «Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանի կազմում ստեղծել զինվորական գործերի դատական կոլեգիա»: Արդյունքում Գերագույն դատարանի կազմում ստեղծվեց զինվորական գործերի դատական կոլեգիա⁷: Կարծում ենք, որ նման իրողությամբ հիշյալ օրենքի 1-ին հոդվածի պահանջները որևէ հիմնավորմամբ չի կարելի

⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր: N15-16, 1992:

համարել կատարված, քանի որ ընդհանուր իրավասության զինվորական դատարաններ չձևավորվեցին. ուղղակի զուտ ներքին համաձայնությունների արդյունքում ընդհանուր իրավասության դատարաններում առանձնացվեցին մեկական դատավորներ, որոնց ընդհանուր իրավասության դատարանի նախագահի կողմից մակագրվում էին միայն զինվորականների մասնակցությամբ քրեական գործեր:

1994 թ. հուլիսի 1-ի օրենքով որոշվեց հրաժարվել առաջին ատյանի դատարանում գործերի կոլեգիալ քննության կարգից: Մինչ այդ դա համարվում էր արդարադատության սկզբունքներից մեկը և ավանդաբար ամրագրվում էր Սահմանադրության մեջ: Իրականում, կոլեգիալությունից հրաժարվելու պատճառները ևս չեն կարող համարվել համակարգային մտածողության արդյունք, այլ ավելի շուտ միտված էին ծառայած խնդիրների հաղթահարմանը: Այդ պատճառներն էին. առաջինը՝ դատավարությանը ժողովրդական ատենակալների մասնակցությունը ապահովելու կազմակերպական և ֆինանսական դժվարությունները, երկրորդը՝ ժողովրդական ատենակալների բացահայտ անտարբեր վերաբերմունքը դատական նիստում տեղի ունեցածի նկատմամբ, գործով ըստ էության որոշում ընդունելիս նրանց ձևական գոյի ապահովումը:

1995 թ. հուլիսի 5-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: «Չնայած նոր Սահմանադրության շուրջ չհաջողվեց հասարակական համաձայնության այնպիսի մթնոլորտ ապահովել, ինչպիսին Անկախության հռչակագրի պարագայում էր, ինչպես նաև հաղթահարել կամասահման իրավամտածողության խորհրդային ինտերցիան, այդուհանդերձ կյանքը ցույց տվեց, որ ՀՀ Սահմանադրությունը վճռական դեր կատարեց երկրի հետագա կայուն զարգացումն ապահովելու և մի շարք ձգնաժամային իրավիճակներից սահմանադրական ելքեր գտնելու հարցում»⁸:

Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլն ազդարարվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որը հռչակեց իշխանությունների տարանջատման սկզբունքը, իսկ նրա 6-րդ գլուխն ամբողջովին նվիրված է դատական իշխանությանը: Սահմանադրությամբ ամրագրված են անկախ դատական իշխանություն ձևավորելու նախադրյալները. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքի գերակայությունը, արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արգելվում է արտակարգ դատարանների ստեղծումը: Անձի կալանավորումը, բնակարանի խուզարկությունը և անձի սահմանադրական մի շարք իրավունքների սահմանափակումը կարող են կատարվել միայն դատարանի միջոցով և այլն:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրության ընդունմամբ արմատական դատաիրավական բարեփոխումների իրականացումն օրվա հրամայական էր, այդուհանդերձ հայեցակարգային քննարկումները տևեցին բավականին երկար⁹:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլով, որի ավարտը կարելի է համարել 2005 թ., ձևավորվել էր ընդհանուր իրավասության դատական համակարգը, որը բարեփոխումների էական առաջընթաց քայլ էր և մեծագույն նվաճում: Ստեղծվեց եռաստիճան դատական համակարգ, քաղաքացիների համար դատարանները դարձան ա-

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 21:

⁹ Նշված հոդվածում հարկ չհամարվեց մանրամասն ներկայացնել դատաիրավական բարեփոխումների Հայեցակարգը, քանզի այն ամբողջ ծավալով ներկայացված է: Տե՛ս Գ. Բաղիրյան, Դատաիրավական բարեփոխումների և Հայաստանի Հանրապետության նոր դատական համակարգը: Երևան, 2002:

ռավել մատչելի, էական և որակական նոր աստիճանի բարձրացավ գործերի քննության հրապարակայնությունը:

Դատաիրավական բարեփոխումների արդյունքում հիմնադրվեց նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը:

«Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքով տնտեսական և զինվորական դատարաններ չստեղծվեցին: Սակայն 2001 թ. սեպտեմբերի 11-ի օրենքով ստեղծվեց ՀՀ առաջին ատյանի տնտեսական դատարան: Ի դեպ, 2001 թ. տնտեսական դատարանի ստեղծման կողմնակիցները ժամանակին դեմ էին դրա ստեղծմանը, իսկ հետագայում ստեղծելու անհրաժեշտության մասին հիմնավոր պատճառաբանություններ այդպես էլ, կարծում ենք, չներկայացվեցին: Իհարկե, չմեղանչելով արդարության դեմ՝ պետք է փաստել, որ այդ դատարանի ձևավորմամբ խիստ բարելավվեց տնտեսական գործերի քննության որակը, սակայն միայն այդ հանգամանքով պայմանավորված, կարծում ենք, հիմնավոր չէ ինքնուրույն դատարանի ստեղծումը, որը, ի դեպ, դուրս էր ընդհանուր դատարանակազմական տրամաբանությունից, որովհետև, որպես միաժամանակ և՛ առաջին, և՛ վերաքննիչ ատյան, չունեցավ ինքնուրույն դատավարության օրենսգիրք: Ուշագրավ է նաև, որ հիշյալ դատարանի քննած գործերի վերլուծությունը վկայում է, որ դրանց 70 տոկոսից ավելին վարչական գործեր են (հարկային, մաքսային և այլ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ակտերի իրավաչափության որոշում), սակայն անհասկանալի է վարչական արդարադատության հիմնադրման փոխարեն զուտ վեճի սուբյեկտով պայմանավորված դատարանի ձևավորումը:

Այդուհանդերձ փաստենք՝ Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների նշված փուլում կարևորվեց ժողովրդավարական, իրավական համակարգ ունեցող երկրների փորձի ընդօրինակման միջոցով անկախ դատական իշխանություն ձևավորելու հանգամանքը: Սակայն թույլ տրվեցին նաև էական սխալներ: Այսպես, դատական մարմինների անկախության երաշխավոր հռչակվեցին ոչ թե Սահմանադրությունն ու օրենքը, այլ հանրապետության Նախագահը: Վերջինս նաև զլխավորում էր արդարադատության խորհուրդը, իսկ արդարադատության նախարարը և զլխավոր դատախազը հանդիսանում էին խորհրդի փոխնախագահներ: Արդարադատության խորհրդի ստղծումն իրավամբ կարևորագույն նշանակության քայլ էր, սակայն դրա՝ կազմի առումով սխալ ձևավորումը¹⁰ չէր կարող առաջադիմական համարվել և նպաս-

¹⁰ Դատախազությունը, Սահմանադրության 103-րդ հոդվածին համապատասխան, օժտված էր և այժմ էլ օժտված է պետական գործունեության ինքնուրույն տեսակով, այսինքն՝ արդարադատության հետ կապ չունեցող իրավասություններով (քրեական հետապնդում, մեղադրանքի պաշտպանություն և այլն), և նրա ներկայացուցիչները կարող էին այդ խորհրդում հանդես գալ «անհնազանդ» դատավորների ձևով:

Իշխանության ձյուղերից օրենսդիրը (որն իհարկե ևս սխալ էր) գերծ պահվեց արդարադատության խորհրդում ներկայացուցիչ ունենալուց, այն դեպքում, երբ գործադիր ձյուղը ներկայացված էր ի դեմս արդարադատության նախարարի, ի դեպ՝ բավականին «ակտիվ» փոխնախագահի մակարդակով:

ՀՀ Նախագահի կողմից արդարադատության խորհրդի զլխավորումը և իրավաչափ չէր: Նախ հանրապետության Նախագահը փաստորեն հանդես էր գալիս որպես գործադիր իշխանության ղեկավար: Միաժամանակ իր ղեկավարած խորհրդի ներկայացմամբ ինքն էր նշանակում դատավորներին: Այսինքն՝ ակնհայտ է, որ նման մոտեցման դեպքում դատական իշխանությունն ամբողջությամբ կենտրոնանում էր նրա ձեռքում, որի պարագայում խոսել զսպումների և հակակշիռների սկզբունքների պահպանման մասին, մեղմ ասած, անտրամաբանական է: (Ավելի մանրամասն վերլուծությունը, տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 925-938):

տել իսկապես անկախ դատական իշխանության ձևավորմանը: Այլ կերպ ասած՝ անկախ դատական իշխանության կերտման սահմանադրական հիմքերը խարխուլ էին:

2005 թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ սահմանադրական հանրաքվե: Պրոֆեսոր Գ. Գ. Հարությունյանը նշում է. «Նոր սկզբունքային մոտեցումներ էին պահանջվում դատական իշխանության անկախության և համակարգային ամբողջականության սահմանադրական երաշխիքներ ապահովելու հիմնահարցերը: Սահմանադրորեն պետք է երաշխավորվեր դատական իշխանության իրական անկախությունը, լուծվեր վարչական արդարադատության արմատավորման հիմնահարցը, գործառնական հստակ փոխհարաբերություններ ապահովվեին դատական իշխանություն իրականացնող ինստիտուտների միջև: Պետք էր առավել գործուն ու արդյունավետ դարձնել սահմանադրական արդարադատության համակարգը:

ՀՀ Սահմանադրությամբ հետևողականորեն իրացված չէր իշխանությունների տարանջատման սկզբունքը, թերի էր ապահովված տարանջատ, միմյանց հակակշիռ և հավասարակշռված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գոյությունը: Անհրաժեշտ էր, վերոնշյալ սկզբունքներից ելնելով՝ հստակեցնել իշխանության տարբեր ինստիտուտների գործառնական լիազորությունները, ամրապնդել հակակշիռների և զսպումների հաշվեկշիռը»¹¹: Վենետիկի հանձնաժողովը 2004 թ. դեկտեմբերի 6-ի իր եզրակացությամբ փաստում էր, որ «...անկախ և անկողմնակալ դատական իշխանության հաստատման և գործունեության սահմանադրական երաշխիքների ամրագրումը ճանաչվել է Հայաստանի սահմանադրական բարեփոխումների առանցքային խնդիրներից մեկը»:

Նշված սահմանադրական փոփոխությունների ընդունումը ազդարարեց Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների երրորդ փուլը, որի նպատակն էր դատական համակարգի կատարելագործումն ու զարգացումը, սահմանադրական նոր մոտեցումներին համահունչ նոր կանոնակարգումների և ինստիտուտների ներդրումը, դատական իշխանության անկախության և ինքնավարության երաշխիքների ամրագրումը, նոր որակով արդարադատության իրականացումը, արդարադատության որակի և արդյունավետության բարձրացումը: Հայաստանի Հանրապետության բարեփոխված Սահմանադրությամբ դատարանների անկախության երաշխավոր հռչակվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, սահմանվեց արդարադատության խորհրդի կազմավորման նոր կարգ՝ բացառելով դրանում գործադիր մարմնի ներկայացվածությունը, սահմանվեց նոր մարմին՝ դատավորների ընդհանուր ժողովը՝ որպես դատական իշխանության ինքնակառավարման բարձրագույն մարմին:

Սահմանադրական նոր իրողության պայմաններում ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ դատաիրավական բարեփոխումների երրորդ փուլին: Նշված փուլի մեկնարկի հայեցակարգը հիմնված էր դատական իշխանության անկախության բարձրացման, դատական իշխանության ինքնավարության և ինքնակառավարման սկզբունքների ներդրման, դատական իշխանության ֆինանսական անկախության, բուն դատական գործունեության և դատարանների կառավարման (վարչարարության) գործառույթների տարանջատման սկզբունքների վրա: Դատաիրավական բարեփոխումների նման հայեցակարգը համահունչ էր նաև ԵՄ-Հայաստան եվրոպական հարևանության քաղաքա-

¹¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 25-26:

կանության (ԵՀՔ) գործողությունների ծրագրի պահանջներին:

2006 թվականի հուլիսին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց դատաիրավական բարեփոխումները կյանքի կոչող և սահմանադրաիրավական նոր լուծումների գործնական ներդրումն ապահովող օրենսդրական նախաձեռնությունների առաջին փաթեթը:

Դատական համակարգի բարեփոխումներն ամբողջացնող համալիր ակտը ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 22-ին ընդունված ՀՀ դատական օրենսգրքը¹² է, որն արտացոլում է վերը նշված հայեցակարգային դրույթները, ոլորտին վերաբերող բազմաթիվ միջազգային համաձայնագրերի պահանջները, սահմանում է դատական իշխանության ինքնակառավարման մարմինները, հստակեցնում արդարադատության խորհրդի լիազորությունների շրջանակը, նախատեսում առանձին մասնագիտացված դատարանի, դատական կարգադրիչների ծառայության ստեղծումը, կարգավորում դատական մարմինների կադրային քաղաքականության հարցերը, ամրագրում դատավորի վարքագծի հիմնական կանոնները, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը: Ստեղծվեց դատական դպրոցը՝ դատական համակարգը որակյալ մասնագետներով համալրելու և դատավորների շարունակական վերապատրաստման գործառնություններն իրականացնելու համար¹³:

ՀՀ դատական օրենսգրքը 2008 թվականի հունվարի 1-ից նախատեսում էր առաջին ատյանի դատարանների նոր համակարգ, որը, բացի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններից, ընդգրկում էր առաջին ատյանի մասնագիտացված դատարանները՝ վարչական, քաղաքացիական և քրեական: Մասնագիտացված քաղաքացիական և քրեական դատարանների ստեղծումը դատաիրավական բարեփոխումների առանցքային բնութագրիչներից էր, սակայն այդ դատարանները վերացվեցին ստեղծվելուց մոտ մեկ տարի հետո, և նորից անցում կատարվեց հինին:

Փաստելով նշված փուլի էական ձեռքբերումները՝ նկատենք նաև, որ վերաքննիչ ատյանի վերաբերյալ բացակայում էր ինստիտուցիոնալ մոտեցումը որը շտկվեց: Անհասկանալի տրամաբանությամբ քրեական և քաղաքացիական գործերով որպես վերաքննիչ ատյան հանդես էր գալիս վերաքննիչ դատարանը, իսկ մասնագիտացված վարչական դատարանը միաժամանակ և՛ առաջին ատյանի դատարան էր, և՛ վերաքննիչ: Խնդիրը ինստիտուցիոնալ մոտեցման բացակայությունն էր: Անգամ հիպոթետիկ անտեսելով վերաքննիչ դատարանի կարևորությունը՝ անհասկանալի է, թե մասշտաբային, հայեցակարգային փոփոխությունների պարագայում (ինչը տեղի ունեցավ դատական օրենսգրքի ընդունմամբ) ինչու՞ չի ընտրվում նույն ինստիտուտների վերաբերյալ միասնական մոտեցում¹⁴: Սա, կարծումն ենք, լրջագույն թերացում է, և գտնում ենք, որ ցան-

¹² ՀՀՊՏ 2007 N 20 (544), 18.04.07:

¹³ 2013 թ. սեպտեմբերի 1-ից դատական դպրոցը միացավ դատախազների դպրոցին, և ստեղծվեց արդարադատության ակադեմիան, որի նպատակներն են՝ դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մեջ դատավորի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումը, մասնագիտական գիտելիքների ընդլայնումը, դատավորների, դատախազների և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված՝ ակադեմիայի շրջանավարտ անձանց, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների, դատական կարգադրիչների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումը:

¹⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 13.04.2010թ. թիվ ՍԴՈ-873 որոշումը, որն ունեցավ անզնահատելի ներդրում վարչական արդարադատության կայացման և զարգացման հացում՝ մեծապես նպաստելով վարչական վերաքննիչ դատարանի ստեղծմանը:

կացած սուբյեկտիվիզմից խուսափելու համար հարկ է օրենսդրորեն ամրագրել կանոն հայեցակարգային փոփոխություններում ինստիտուցիոնալ մոտեցումների կիրառման միասնականության պարտադիրության մասին¹⁵:

Ամփոփելով դատախիրավական բարեփոխումների վերոհիշյալ ժամանակահատվածը, մեր կարծիքով, կարելի է արձանագրել էական դրական արդյունքները, ինչպես նաև սայթաքումներն ու բացթողումները:

Որպես դրական արդյունք անհրաժեշտ է ընդգծել վարչական արդարադատության հիմնադրումը, դատարանի գործունեության առավելագույն հրապարակայնության ապահովումը, դատավորների ընտրության նոր ընթացակարգերի ներդրումը, դատարանի անկախության ապահովմանն ուղղված նոր կանոնակարգումները և այլն:

Որպես չհիմնավորված փոփոխություններ կարելի է արձանագրել՝

1. դատական համակարգում մասնագիտացված դատարանների (քրեական և քաղաքացիական) վերացումը՝ փոխանակ դրանց դերի ու նշանակության վերաիմաստավորման:

2. Դատավարական օրենսգրքերի առանձին կանոնակարգումների անհամապատասխանությունը դատական օրենսգրքի կանոնակարգումներին, որոնք պրակտիկ կիրառության հարթությունում հանգեցնում էին առանձին բարդությունների:

3. Իրավունքի երկու ատյանների ձևավորումը՝ վերաքննիչ և վճռաբեկ՝ առանց դրանց գործառնությունների հստակ սահմանազատման, արդյունքում վերաքննիչ դատարանի դերի նսեմացումը և վճռաբեկ դատարանի գերլիազորությունների ամրագրումը:

4. Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու չհիմնավորված հիմքի նախատեսումը, մյուս դատարանների համար՝ վճռաբեկ դատարանի որոշումների ոչ թե ատյանային հեղինակության ուժով, այլ օրենքով պարտադիր ուժ տալը, վճռաբեկ դատարանի նախագահին բազմաթիվ հարցերով չհիմնավորված լիազորություններով օժտումը:

5. Դատարանների կազմակերպական գործառնությունների կենտրոնացումը և այլն:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ դատախիրավական բարեփոխումների երրորդ փուլը (գուցե վճռական) լինելիության գործընթաց է ապրում, և դրան սատարելու ու նշված խնդիրները իրականացնելու համար անհրաժեշտ են նաև տեսական աշխատություններ:

¹⁵ Ցավոք, ինստիտուցիոնալ մտածողության բացակայությունը՝ որպես սուբյեկտիվիզմի տուրք, հաճախ նկատելի է նաև դատարանների գործունեության կազմակերպման հարցերում: Հակառակ պարագայում անհասկանլի է, որ վերաքննիչ դատարանների համար նախատեսված շենքում գործում են երկու վերաքննիչ դատարան և առաջին ատյանի վարչական դատարանը, իսկ վարչական վերաքննիչ դատարանը գտնվում է բոլորովին այլ շենքում, երբ միանշանակ տրամաբանված էր մեկ շենքում կենտրոնացնել վերաքննիչ ատյանը:

THE PROCEDURE OF FORMATION OF THE JUDICIAL AUTHORITY BODIES OF THE THIRD REPUBLIC OF ARMENIA, THERE LEGAL BASES AND STAGES OF DEVELOPMENT

Tigran Mukuchyan

*Chairman of the Central Electoral
Commission of the Republic of Armenia*

Supreme Council of Armenia in its first session held on 23th August 1990 adopted the “Declaration of Independence of Armenia” which announced the commence of the procedure of Armenian independency. The adoption of the Declaration acclaimed also the beginning of the formation process of judicial authority bodies of the third Republic of Armenia. The whole evolution of formation and development of the Judicial Bodies of the Republic of Armenia; implemented judicial and legal reforms are presented in the article. According to the researched material the period is presented in three stages, which are referred to as stages of implementing judicial and legal reforms. The first stage (1990-1995) includes the period from announcing the Declaration of Armenia to adopting the Constitution, the second stage (1995- 2005) includes the period from adopting the Constitution to making new Constitutional amendments.

On 27th of November, 2005, through referendum, essential changes were made in the concept of RA Constitution, which referred also to the present system of the judicial authorities.

These Constitutional amendments served as basis for the third stage of the judicial and legal amendments which is still in process of existence and improvement.

Implemented improvements, achievements conditioned by them, as well as omissions and failures of each stage (in the author’s opinion) are presented in the research. The issues of each stage of judicial and legal amendments first of all are considered from the perspective of establishing independent judicial authorities.

ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ОРГАНОВ СУДЕБНОЙ ВЛАСТИ ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ, ПРАВОВЫЕ ОСНОВЫ, ЭТАПЫ РАЗВИТИЯ

Тигран Мукучян

*Председатель Центральной Избирательной Комиссии РА,
соискатель кафедры уголовного процесса
и криминалистики ЕГУ*

23 августа 1990 года во время первой сессии Верховного Совета Армении была принята Декларация о независимости Армении, благодаря которой было положено начало процессу независимости Армении. Принятие Декларации возвестил также о начале формирования органов судебной власти Третьей

Республики Армения. В статье представлена вся эволюция формирования и развития судебных органов Республики Армения – осуществленные судебные реформы. По данным исследования, материал представлен на трех этапах, которые упоминаются как этапы осуществления судебных реформ. Первый этап, 1990-1995 годы, включает принятие Декларации независимости Армении до принятия Конституции, второй этап 1995-2005, с принятия Конституции до реализации новых конституционных реформ. 27 ноября 2005, посредством референдума были внесены существенные изменения в содержание Конституции, которые касались также нынешней системы судебной власти. Эти конституционные изменения заложили основу процесса третьего этапа судебных реформ, который еще находится в стадии и совершенствования.

В статье представлен ход реформ, достигнутые результаты, а также имеющиеся на каждом этапе недостатки. Проблемы каждого этапа судебных реформ в первую очередь рассматриваются с точки зрения вопроса создания независимой судебной системы.

Բանալի բառեր – դատարան, դատավոր, դատաիրավական բարեփոխումներ, դատական համակարգ, դատարանակազմություն, Հռչակագիր, Սահմանադրություն, անկախություն, իշխանությունների տարանջատում, պետականություն

Key words: court, judge, judicial reforms, judicial system, formation of court, Declaration, Constitution, independence, separation of power, statehood.

Ключевые слова: суд, судья, судебные реформы, судебная система, судебное формирование, Декларация, Конституция, независимость, разделение властей, государственность.